

նութիւնէ զուրկ հաղարաւոր զրեր թափեր են Պօլիս, Պօլսեցւոց զթու թիւնը շարժելու համար:

Յիրաւի սցալսի վիճակ մը դառն է և ցաւալի և ամեն կարգի ազգայնոց զթութեանը արժանի:

Ուրախ եմք որ Ամեն Ս. Պատրիարք Հօր հրամանաւ 12 անձէ բաղկացեալ յանձնաժողով մը կազմուած է, որոյ անդամք են

Յակոբ	էֆէնտի	Նորատուկեան
Բարսեղ	„	Հալաճեան
Միրտիչ	„	Եսայեան
Առապա	„	Իկիտպաշեան
Տիրիան	„	Ալամիշէրտանեան
Բարթող	„	Քիրքճիպաշեան
Մ. Մանուկ	„	Մանուկեան
Յարութիւն	„	Մէրեքմալլի
Յովհաննէս	„	Ալամիշեան
Պետրոս	„	Միրասնէտիեան
Կարապետ	„	Փալազեան
Սեպուհ	„	Մագսուտեան

Յանձնաժողովն իր երկրորդ նիստն ընելով շաբաթ օր ի Ղալաթիա, Ազգին մէջ գտնուած ամեն կարգի վաճառականաց ցանկը պատրաստեց հանգանակութիւն մը բանալու համար. սակայն հանգանակութիւնը կարծեմք բաւական չէ սովելոց համար. այլ անմիջական օգնութիւն պէտք է և այն ուրիշ բանով չկրնար ըլլալ, եթէ ոչ անմիջապէս փոխառութեան դիմելով և ձեռք բերուած գումարը ընդ փոյթ սովելոց խրկելով: Միւս կողմանէ յանձնաժողովն կարող է դարձեալ հանգանակութեան դիմել և զոյացած արդիւնքը փոխառու անձին կամ ընկերութեան հատուցանել:

Յանձնաժողովը Մեծ. Անդամք՝ որք բարեհէր և զթած անձինք են, մեր այս առաջարկութեան օգտակարութիւնը կզգան անշուշտ. ուստի կը յուսամք թէ այս մասին հարկ եղածը ժամ առաջ կը տնօրինեն:

Ս. Պատրիարքը դաւառաց Առաջնորդներուն շրջաբերականներ ուղղեց սովելոց համար դրամ հաւաքել և անմիջապէս յանձնաժողովը խրկելու համար. սակայն այսքանը բաւական չէ: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն ալ պէտք է Ռուսաստանի վիճակներուն մէջ հանգանակութիւն մը բանայ և իր դժբաղդ զաւակաց օգնու-

թեան հասնի: Բաց ասէ Ազգային երեսփոխաններէն սկսեալ մինչև էն յետին ազգային պաշտօնեայն տեսուչ խորհուրդներն ու հոգաբարձութիւնները մայրաքաղաքիս բոլոր թաղ. խորհուրդները պէտք է անմիջապէս միանան և թաղերու մէջ հանգանակութեամբ դրամ հաւաքեն: Այս միջոցներով միայն կարելի է բազմահայ գաւառներէն սովել ընջել և հաղարաւոր անձանց կեանքը մօտալուտ փրկելէն փրկել:

Այն որ մարդասէր է, և ի մասնաւորի այն որ դժբաղդ ազգայնոց կրած ցաւոց վրայ կը կարեկցի պէտք է իրեն ինկած բաժինը վճարէ և վշտահար սրտերն ու լքեալ ազգայինները իրենց ցաւոց մէջ մխիթարէ*):

Հայրենիք. Թ. 224, Հոկտեմբեր 15.

ԹԱԴԼՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Հոգեղգօն Թադէոս Եպիսկոպոս՝ Ախալքալսի վիճակի Առաջնորդական Փոխանորդն՝ ի 23 ն ամսոյս մեկնեցաւ աստի երթալ յիւր վիճակ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՍԵԱՆՑ.

Գ. Կ. Գլխորդ Արքեպիսկոպոս Յօրեանց՝ ի տեղի Թադէոս Վարդապետի՝ կարգեցաւ Առաջնորդական Փոխանորդ վիճակին Հին—Նախիջևանի, և ի 26 ն ամսոյս մեկնեցաւ ի Ս. Լճմիաճնէ և գնաց յիւր պաշտօնատեղին:

(*) Միւս լրագիրներէն ևս կտեղեկանամք որ յիշեալ Յանձնաժողովն փութով 4200 սակ հաւաքած է ի նպատակ սովելոց և արժանը կարգադրած: